ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 դեկտեմբերի 2024թ. թիվ 1006-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 1800-Ն ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 15-ի ««Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու ու հակահեղեղային անհետաձգելի միջոցառումներ իրականացնելու մասին» թիվ 1800-Ն որոշման 4-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 1800-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների կազմակերպման նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ հետևողականություն դրսևորել Դեբեդ, Փամբակ, Ձորագետ, Տաշիր գետերի հունների մաքրման ընթացքում դուրս բերված քարերը և ծառերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից հաշվառված ծավալներին համապատասխան հետագայում Տաշիր, Ստեփանավան, Փամբակ, Թումանյան և Ալավերդի համայնքների կողմից տիրապետելու և օգտագործելու նկատմամբ:

3. Տաշիր, Ստեփանավան, Փամբակ, Թումանյան և Ալավերդի համայնքների ղեկավարներին՝ հետագայում լիարժեք տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու նպատակով հատկացնել համապատասխան տարածքներ Դեբեդ, Փամբակ, Ձորագետ, Տաշիր գետերի հունների մաքրման ընթացքում դուրս բերված քարերի, ծառերի, կտրտված և արմատահանված թփուտների և շինարարական աղբի կուտակման համար:

4. Հանձնաժողովի նախագահին՝ Դեբեդ, Փամբակ, Ձորագետ, Տաշիր գետերի խնդրահարույց հատվածների մաքրման և հակահեղեղային միջոցառումների ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ 10-

օրյա պարբերականությամբ տեղեկատվություն ներկայացնել ինձ և արդյունքների ամփոփումից հետո 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին ներկայացնել մանրամասն հաշվետվություն՝ կատարված աշխատանքների վերաբերյալ:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

X

2024-12-04 18:49:29 GMT+4
Հավաստված է EKOTA-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Signed by: GHAZARYAN ARAM 2003720081 Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 4
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2024թ. դեկտեմբերի 4-ի
թիվ 1006-Ա որոշման

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 1800-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Գոռ Ասրյան	- հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ
Միեր Խեչումյան	- հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարմնան հարցերի վարչության պետ
Արտակ Դեմիրչյան	- հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի անդամներ.

Ռուբեն Մարգարյան	- ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ
Մերի Դալլաքյան	- ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ
Սիմոն Ղափլանյան	- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Մելիորացիա» ՓԲԸ-ի կոլեկտորադրենաժային ցանցերի շահագործման բաժնի տոպոգրաֆ
Լևոն Միքայելյան	- ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության Հյուսիսային ջրավազանային տարածքային կառավարման բաժնի պետ
Արմեն Գրիգորյան	- ՀՀ շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Վարդգես Եգանյան	- ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հիդրոլոգիայի ծառայության Դեբեդի գետավազանի հիդրոլոգիական կայանի պետ
Դավիթ Սարգսյան	- «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Թումանյանի անտառտնտեսություն» մասնաճյուղի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
Արմեն Բարսեղյան	- ՀՀ ներքին գործերի նախարարության Թումանյանի ՀՓՋ հրամանատար, փ/ծ փոխգնդապետ
Արմեն Հարությունյան	- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի գլխավոր պետական տեսուչ
Արսեն Ղարիբյան	- ՀՀ Լոռու մարզի «Լոռի» ՋՕԸ-ի գործադիր տնօրեն
Արամ Եդիգարյան	- «Հարավ-Կովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր ինժեներ
Սերյոժա Մկրտչյան	- Վանաձորի գծային կայարանային միավորման պետ, «Հարավ-Կովկասյան երկաթուղի» ՓԲԸ «Վանաձոր» հենակետային կայարանի պետ

Արման Սաղաթելյան	- «Հարավ-Կովկասյան երկաթուղի» ՓԲԸ Վանաձորի ուղեմասի պետ
Էդգար Արշակյան	- ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավար
Արմեն Գրիգորյան	- ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավար
Սուրեն Կոստանդյան	- ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավար
Սուրեն Թումանյան	- ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավար
Դավիթ Ղումաշյան	- ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավար

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Recoverable Signature

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Signed by: ASHRAFYAN KAMO 2610780427

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ